



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ 2013 թ. ԿԱՏԱՐՎԱԾ

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Գիտահետազոտական գործունեություն

Ուժեղ համալսարանները գործում են՝ ելնելով երկրում գիտելիքի հասարակության կառուցման գործընթացներում ակտիվ մասնակցության և «ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում» սկզբունքներից, նպաստում են բարձրագույն կրթության բարձր որակին, հետազոտական և նորաստեղծական գործունեությանը: Դրան հասնելու համար երկիրը կարիքն ունի իրենց ուժերի մեջ վստահ համալսարանների, որոնք ունակ են որոշելու սեփական զարգացման ուղիները, մեծ ներդրում ունենալու երկրի սոցիալական, մշակութային և տնտեսական բարեկեցության ապահովման գործում: Այդ տեսակետից ձեռնարկվել են առաջին քայլերը՝ գիտությունը համալսարանի գործունեության հիմնական բաղադրիչը դարձնելու ուղղությամբ, ինչը, իր հերթին, մյուս կարևոր հիմնախնդրի՝ տնտեսագիտական կրթության հուսալի հենքն է:

2013 թ. նշանավորվեց նրանով, որ համալսարանի ողջ պատմության ընթացքում առաջին անգամ սեփական միջոցներից 100 մլն դրամ ներդրվեց գիտական հետազոտությունների համար: ՀՀ կառավարության 2012-2017 թթ. ծրագրով սահմանված գերակայությունների շրջանակներում 2013 թ. առաջին անգամ հանրապետությունում հայտարարվեց հետազոտական թեմաների ներհամալսարանական գիտական դրամաշնորհների մրցույթ:


ՀՊՏՀ խորհրդի 2013 թ. հունվարի 17-ի նիստի որոշմամբ ստեղծվեց «Ամբերդ» հետազոտական կենտրոնը:

Կենտրոնի առաքելությունը մարդկանց կյանքի վրա ազդող սոցիալական և տնտեսական հիմնախնդիրների, դրանց լուծման ուղիների բացահայտումն է, որոնց միջոցով սոցիալ-տնտեսական որոշակի քաղաքականություն վարելով՝ կարելի է աջակցել նրանց բարեկեցության բարձրացմանը և նպաստել երկրի ընդհանուր զարգացմանը: Կենտրոնի գործունեությունը միտված է ձևավորելու մի այնպիսի միջավայր, որտեղ կառուցողական նոր գաղափարները և հայեցակարգերը կարող են դրվել զարգացման հիմնավոր քաղաքականության հիմքում՝ ապահովելով բաց և կառուցողական երկխոսություն, նպաստելով զարգացման հեռանկարների նկատմամբ վստահության աճին և դրանց շուրջ համագրային համաձայնությանը:

Կենտրոնում իրականացվող հետազոտություններում 2013 թ. ընդգրկված է եղել մոտ 90 հետազոտող՝ դասախոսներ, ասպիրանտներ, մագիստրանտներ, պետական կառավարման մարմինների աշխատակիցներ, մասնավոր հատվածի փորձառու մասնագետներ:

Ներհամալսարանական դրամաշնորհային թեմաներին մասնակցել է 70 հետազոտող՝ դասախոսներ, ասպիրանտներ և ուսանողներ:

Ընդհանուր առմամբ, ներհամալսարանական դրամա-շնորհային թեմաներում և «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գիտահետազոտական ուղղություններում ներգրավված է եղել բուհի պրոֆեսորադասախոսական կազմի շուրջ 20%-ը:



Քճապատկեր 2.1. «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կառուցվածքը

Համալսարանի գիտահետազոտական գործունեության հիմնական ուղղությունները 2013 թ.

Հաշվետու ժամանակաշրջանում համալսարանում շարունակվել է ամբիոնային 54 թեմաներով գիտահետազոտական աշխատանքների իրականացումը (հավելված 2.2), ավարտին են հասցվել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի 3 դրամաշնորհային, 13 ներհամալսարանական գիտական

դրամաշնորհային թեմաներ (հավելված 2.1), տրվել է «Ամբերդ» հետազոտական կենտրոնի (հավելված 2.3) ծրագրերի կատարման մեկնարկը՝ 15 գիտական ուղղություններով:

Ամբիոնային հետազոտությունները կատարվել են տնտեսագիտության, բնական գիտությունների, պատմության, քաղաքագիտության, փիլիսոփայության, բնաստիքության բնագավառներում: Հետազոտությունների այս ձևաչափը տասնամյակների պատմություն ունի և ժառանգվել է խորհրդային ժամանակներից: Ի հավելումն դրանց՝ որպես համալսարանի գիտության բնագավառի նորաստեղծություն, կարող են դիտվել ներհամալսարանական դրամաշնորհները և «Ամբերդի» շրջանակներում կատարվող հետազոտությունները:

Կատարվել են դրամաշնորհային հետևյալ թեմաները.

- **«ՀՀ տնտեսության մրցունակության ու նորարարության հիմնախնդիրները և դրանց ազդեցության գնահատումը տնտեսական աճի վրա»** (թեմայի ղեկավար՝ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր Ա. Թավադյան),
- **«Տնտեսական աճի որակը ՀՀ-ում»** (թեմայի ղեկավար՝ տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր Հ. Աղաջանյան),
- **«ՀՀ մրցունակության բարձրացման գերակայությունները զբոսաշրջության շուկայում»** (միջամբիոնային թեմայի ղեկավար՝ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յու.Մ.Մուվարյան),
- **«Արդյունաբերական քաղաքականության իրականացումը որպես ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման գործոն»** (թեմայի ղեկավար՝ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր Մ.Մելքոնյան),
- **«ՀՀ առևտրային ցանցերում հաշվապահական հաշվառման մոնիթորինգի տեղեկատվական համակարգի կառուցման և ներդրման գիտամեթոդական լուծումները»** (միջամբիոնային թեմայի ղեկավար՝ տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր Վ. Մարգարյան),
- **«Բնապահպանական և բնօգտագործման վճարների որոշման մեթոդաբանության կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում»** (թեմայի ղեկավար՝ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր Ս. Գևորգյան),
- **«Երևան քաղաքի և ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները»** (թեմայի ղեկավար՝ մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչ, տ.գ.թ., պրոֆեսոր Ի. Տիգրանյան),
- **«ՀՀ-ում բարձրագույն տնտեսագիտական կրթությամբ մասնագետների պահանջարկի գնահատումը և կանխատեսումը»** (թեմայի ղեկավար՝ մարքեթինգի ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր Ա. Չաքարյան),
- **«Երկարաժամկետ ֆինանսական ռեսուրսների վերարտադրության հիմնահարցերը ՀՀ-ում»** (թեմայի ղեկավար՝ տ.գ.դ., դոցենտ Ս. Սուքիասյան),
- **«Փոքր և միջին բիզնեսի հարկային պլանավորման հիմնախնդիրները»** (թեմայի ղեկավար՝ տ.գ.դ., դոցենտ Ա.Մաթևոսյան),
- **«ՀՀ տնտեսության նորամուծային-տեխնոլոգիական արդիականացումը երկարաժամկետ ինստիտուցիոնալ փոխակերպման պայմաններում»** (թեմայի ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Ա. Մարգարյան),
- **«Նորամուծական գործունեություն. հասկացություններ և բառեր»** (ստեղծագործական խմբի ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Ծ. Կարապետյան),
- **«Ժամանակակից տնտեսագիտական խոսույթի լեզվատրամաբանական վերլուծություն»** (կատարող՝ փ.գ.դ., պրոֆեսոր Վ. Միրզոյան):

Դրամաշնորհային թեմաների շրջանակներում կատարված աշխատանքների արդյունքների մի մասը հրատարակվել է 2013 թ: Մյուս աշխատանքների առանձին արդյունքներ հրատարակվել են առանձին գիտական հրատարակություններում, իսկ հիմնական հրատարակումները նախահրատարակչական փուլում են:

2013 թվականին համալսարանում կատարվել է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» բյուջետային ֆինանսավորմամբ երկու թեմա՝

- **«Գիտության և կրթության ազդեցությունը տնտեսական և սոցիալական զարգացման վրա»** (թեմայի ղեկավար՝ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յու.Մուվարյան),
- **«Ամբողջական պահանջարկի կառուցվածքային տեղաշարժերի վերլուծությունն ու կանխատեսումը ՀՀ-ում»** (թեմայի ղեկավար՝ մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչ, տ.գ.թ., պրոֆեսոր Ի.Տիգրանյան):

2013 թ. «Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր-2012» մրցույթի արդյունքներով, ՀՊՏՀ ասպիրանտ Գայանե Ավետիսյանը արժանացել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի դրամաշնորհին և կատարել **«Տնտեսական մրցակցության պաշտպանության հիմնախնդիրները ՀՀ-ում** (տեսության և պրակտիկայի հարցեր)» թեման:

Բացի վերոնշյալից՝ համալսարանի առանձին աշխատակիցներ ներգրավված են ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում իրականացվող հետազոտություններում, ինչպես նաև միջազգային մի քանի ծրագրերում:

«Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունը սկսվել է 2013 թ. հունիսից: Հետազոտական աշխատանքներն իրականացվում են 3 ծրագրի շրջանակներում.

- **«Սոցիալ-տնտեսական զարգացում»,**
- **«Ազգային մրցունակություն և միջազգայնացում»,**
- **«Ազգային անվտանգություն»:**

«Սոցիալ-տնտեսական զարգացում» հետազոտական ծրագրի շրջանակներում հետազոտություններ են իրականացվում 9 ուղղություններով.

- «Տնտեսական զարգացում»,
- «Սոցիալական զարգացում և աշխատանքի շուկա»,
- «Մակրոտնտեսական վերլուծություն, մոդելավորում և կանխատեսում»,
- «Տեխնոլոգիական զարգացում, թվային տնտեսություն»,
- «Պետական կառավարում և տեղական ինքնակառավարում»,
- «Կարգավորում և մրցակցություն»,
- «Տարածական զարգացում»,
- «Հարկաբյուջետային քաղաքականություն»,
- «Ֆինանսական շուկաներ և ծառայություններ»:

«Ազգային մրցունակություն և միջազգայնացում» ծրագրի շրջանակներում հետազոտություններ են իրականացվում 2 ուղղություններով.

- «Մրցունակություն, միջազգայնացում և արտաքին առևտուր»,
- «Աշխատուժի միգրացիա»:

«Ազգային անվտանգություն» հետազոտական ծրագրի շրջանակներում հետազոտություններ են իրականացվում 3 ուղղություններով.

- «Տնտեսական անվտանգություն»,
- «Հոգևոր բարոյական անվտանգություն»,
- «Էկոլոգիական անվտանգություն»:

Բարձրագույն տնտեսագիտական կրթության համաշխարհային զարգացման միտումների, այդ բնագավառում նվաճումներ ունեցող երկրների փորձի ուսումնասիրության և տեղայնացման, ՀՊՏՀ մրցակցային առավելությունների ձևավորման ու զարգացման հետազոտություններ ու մշակումներ (ուսումնական ծրագրերի, դասավանդման տեխնոլոգիաների և այլն) իրականացնելու (կրթական գործընթացների գիտական ապահովման՝ R&D) համար հետազոտական կենտրոնում ձեռնարկվել են հետազոտություններ «Կրթական ծրագրերի և տեխնոլոգիաների հետազոտություններ և զարգացում» ուղղությամբ:

Գիտաժողովներ, սեմինարներ

2013 թ. անցկացվել է երկու գիտաժողով.

- **«Զարգացում»** ներհամալսարանական գիտաժողովը (Աղվերան),
- համալսարանի 23-րդ գիտական նստաշրջանը՝ **«Տնտեսական զարգացման քաղաքականության արդի հիմնախնդիրները ՀՀ-ում»** խորագրով:

2013 թ. հուլիսի 6-8-ը Աղվերանում տեղի ունեցած **«Զարգացում»** ներհամալսարանական գիտաժողովը համանման միջոցառումների շարքում նորարարություն էր: Նպատակն էր «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ուսումնասիրությունների, ներհամալսարանական գիտական դրամաշնորհների և ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի բյուջետային ֆինանսավորմամբ թեմաների շրջանակներում հայեցակարգային մոտեցումների, կատարված հետազոտությունների նախնական արդյունքների ներկայացումը: Համաժողովի ձևաչափը հնարավորություն ընձեռեց քննարկումներ անցկացնել ոչ միայն վերոնշյալ ուղղություններով, այլև առանձին քննարկման առարկա դարձնել հա-

մալսարանի զարգացման հիմնախնդիրները՝ կապված կրթական գործընթացների ուսումնամեթոդական հենքի, դասավանդման տեխնոլոգիաների կատարելագործման, ուսանողների սոցիալական խնդիրների հետ:

«Զարգացում» գիտաժողովում ներկայացված զեկուցումներն ամփոփվել են շուրջ 20 մամուլ ծավալով ժողովածուում, որը գտնվում է հրատարակության գործընթացում:


ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսական աջակցությամբ 2013 թ. հոկտեմբերի 23-25-ը անցկացվեց համալսարանի 23-րդ գիտական նստաշրջանը՝ «Տնտեսական զարգացման քաղաքականության արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» խորագրով: Լիագումար նիստին «ՀՀ գիտության ոլորտի զարգացման միտումները և խնդիրները» զեկուցումով հանդես եկավ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մամվել Հարությունյանը:

Գիտաժողովի աշխատանքները կազմակերպվեցին «Գործարար միջավայր և ներդրումային քաղաքականություն» «Ֆինանսական շուկաներ և հարկային քաղաքականություն», «ՀՀ տնտեսական զարգացումը և տնտեսական անվտանգությունը. խնդիրներ և հեռանկարներ», «Միջազգային տնտեսական համագործակցություն» խորագրերով՝ համապատասխան բաժանմունքներում, ներկայացվեց 140-ից ավելի զեկուցում:

Գիտաժողովի շրջանակներում անցկացվեց «Մաքսային միությանը ՀՀ անդամակցությունը» թեմայով կլոր սեղան, որի ընթացքում համալսարանի գիտնականները քննարկեցին այդ իրադարձությանն առնչվող հիմնախնդիրները և հեռանկարները:

Հրատարակման են պատրաստ գիտաժողովի՝ շուրջ 40 մամուլ նյութերը:

Համալսարանի գիտական գործունեությանը նոր շունչ հաղորդեցին գիտական բազմաթիվ սեմինարները, որոնք անդրադարձել են ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող թեմաներին, ներհամալսարանական գիտական դրամաշնորհներին, «Ամբերդ» հետազոտական կենտրոնի շրջանակներում կատարված հետազոտություններին:



Գծապատկեր 2.2. ՀՊՏՀ-ում անցկացված գիտաժողովները և գիտական սեմինարները

Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել և անցկացվել են 30-ից ավելի գիտական սեմինարներ ու քննարկումներ՝ նվիրված երկրի ֆինանսական կայունության, սոցիալ-տնտեսական և այլ հրատապ հիմնախնդիրների:


Շարունակվել է հետազոտական համագործակցությունը ՀՀ կենտրոնական բանկի հետ: Համալսարանի ուսանողների և պրոֆեսորադասիտական կազմի քննարկմանն են ներկայացվել «ՀՀ տնտեսության փաստացի զարգացումները և մակրոտնտեսական կանխատեսումները միջնաժամկետ հատվածում» (2013 թ. ապրիլ 10) և «ՀՀ ֆինանսական կայունության հաշվետվությունը» (2013 թ. նոյեմբեր 27) վերառաջությամբ զեկուցումները, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի վերլուծությունների ու հետազոտությունների մասին լայնածավալ տեղեկատվություն: Քննարկումներին մասնակցացել են ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի անդամ Արմենակ Դարբինյանը և բանկի այլ պաշտոնյաներ:

Մեմինարների, կլոր սեղանների, տարբեր քննարկումների հաճախակի կազմակերպմանը, դասախոսներից բացի, մասնակցել են նաև ուսանողներ և ասպիրանտներ: Այս ամենը ոչ միայն աշխուժացրել է համալսարանի գիտական կյանքը, այլև որոշակի նպաստ բերել մասնակիցների հետազոտական հմտությունների մեծացմանը, փորձի կուտակմանը և գիտական բանավեճի մշակույթի ձևավորմանը, ինչը կարևոր նախադրյալ է հետագա հետազոտությունների արդյունավետության բարձրացման համար:


ՀՊՏՀ աշխատակիցների հետազոտությունների արդյունքների հրապարակումները

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացված հետազոտությունների արդյունքների հիման վրա հրատարակվել են 1 դասագիրք, 14 ուսումնական ձեռնարկ, 4 մենագրություն, 7 գիրք, 9 դասախոսության տեքստ, 550 գիտական հոդված, 39 ուսումնամեթոդական աշխատանք, 1 բառարան: Հոդվածներից 62-ը լույս է տեսել արտասահմանյան պարբերականներում (հավելված 2.3):

Գիտական ամսագրերում 2013 թ., 2011 թ. համեմատությամբ, 1,5 անգամ ավելացել է ՀՊՏՀ գիտնական մանկավարժների, ասպիրանտների ու մագիստրանտների հրապարակումների թիվը: Մինևույն ժամանակ, 1,7 անգամ ավելացել է հրապարակումների քանակը արտասահմանյան ամսագրերում:



Գծապատկեր 2.2. ՀՊՏՀ աշխատակիցների հրապարակումները



Գծապատկեր 2.3. Հրատարակված գիտական հոդվածներն ըստ մեծ տեսակարար կշիռ ունեցող ամբիոնների

Դրանց 53,5%-ը բաժին է ընկնում 7 ամբիոնի (մակրոէկոնոմիկայի՝ 13%, միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման՝ 9%, բանկային գործի և սպառնալից գոյության՝ 7,2%, մարքեթինգի՝ 6,7%, միջազգային տնտեսական հարաբերությունների՝ 6,2%, ֆինանսների՝ 5,8%, կառավարման՝ 5,6%, բնօգտագործման տնտեսագիտության՝ 5,4%):


Ցավոք, նույնը չենք կարող արձանագրել դասագրքերի, ուսումնական ձեռնարկների հրատարակման առումով. 2012 թ. համեմատությամբ դրանց թիվը նվազել է 13-ով, իսկ 2011 թ. համեմատությամբ՝ 4-ով:

Ի հավելում վերոնշյալի՝ 2013 թ. նախապատրաստվել են և հրատարակչական փուլում են ներհամալսարանական դրամաշնորհներով կատարված հետազոտությունների արդյունքներին վերաբերող 12 նյութ՝ շուրջ 47 մամուլ ծավալով, ինչպես նաև «Ամբերդ» հետազոտական կենտրոնի


ուղղությունների շրջանակներում կատարված հետազոտություններին առնչվող 18 նյութ՝ շուրջ 100 մամուլ ծավալով:

Գիտության բնագավառում կատարված ներդրումները 2013 թ.

2013 թ. առանձնահատուկ տարի էր գիտության բնագավառում կատարված ներդրումների առումով: Համալսարանի սեփական միջոցների հաշվին, ՀՊՏՀ խորհրդի որոշմամբ, ոչ բյուջետային եկամուտների 3,7%-ը կամ 100 մլն դրամ հատկացվեց գիտական հետազոտություններին: 2013 թ. սեփական միջոցներից փաստացի ծախսվել է նախատեսվածից 8%-ով ավելի:



Գծապատկեր 2.2. Գիտության բնագավառում կատարված ներդրումների դինամիկան



Գծապատկեր 2.3. ՀՊՏՀ գիտական գործունեության ֆինանսավորման աղբյուրները

Համեմատության համար նշենք, որ զարգացած երկրներում հետազոտությունների նպատակով կատարվող ներդրումները ՀՆԱ-ի 2-3 %-ն են կազմում: Ի հավելումն դրա՝ 2013 թ. ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորումը կազմել է 12,9 մլն դրամ, որից 10,8 մլն դրամը՝ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» հոդվածով, իսկ 1,5 մլն դրամը՝ «Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր-2012»-ով և 600 հազար դրամ՝ ՀՊՏՀ 23-րդ գիտաժողովի ֆինանսավորում: Այսպիսով՝ 2013 թ. գիտական գործունեության համար հատկացումների ընդհանուր գումարը կազմել է 120,9 մլն դրամ, որից 89,3%-ը համալսարանի սեփական միջոցների հաշվին: Կատարված ներդրումները հիմնականում ուղղվել են հետազոտողների վարձատրությանը: Ավելին՝ գիտական գործունեության համար կատարվել են նաև այլ՝ անուղղակի ծախսեր՝ կապված գիտաժողովների անցկացման, սարքավորումների ձեռքբերման, ենթակառուցվածի զարգացման, հատկապես ներքին ցանցի ստեղծման, նյութատեխնիկական հենքի զարգացման հետ: Դրանց թվին են դասվում նաև «Ամբերդ» հետազոտական գրասենյակի կապիտալ նորոգումը, կահավորումը և գրասենյակային սարքավորումներով հագեցումը:

Գիտական հետազոտություններին հատկացված միջոցները բաշխվել են հետևյալ կերպ՝

- ներհամալսարանական դրամաշնորհներ՝ 37 մլն դրամ,
- «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտական ուղղություններ՝ 71 մլն դրամ:

Հետազոտություններում ներգրավված ՀՊՏՀ աշխատողներին, միջին հաշվով, վճարվել է իրենց ամսական դրույքաչափի 50% չափով հավելավճար, ասպիրանտներին՝ 80 հազար դրամ, ուսանողներին՝ 50 հազար դրամ:

Գիտության ու կրթության նվիրյալների՝ թե՛ ուսանողի, ասպիրանտի, թե՛ դասախոսի վարձատրությունը պետք է լինի արժանապատիվ: Վարձատրության և նյութական խրախուսման այդ սկզբունքն է այսուհետ կիրառվելու ՀՊՏՀ-ում՝ այն ակնկալիքով, որ նրանց հետազոտությունների արդյունքներն օգտակար կլինեն ուսումնական գործընթացների արդյունավետության բարձրացման, երկրի զարգացման հիմնախնդիրների լուծման համար:

Ուսանողների գիտահետազոտական գործունեությունը

Համալսարանի հաջողությունները պայմանավորված են երիտասարդ հետազոտողների՝ գիտության մարդկային ներուժի զարգացման արագացմամբ:

Ուսանողների գիտահետազոտական աշխատանքը մնում է ուսումնադաստիարակչական գործընթացի հիմնական բաղկացուցիչ մասերից մեկը:

Գիտահետազոտական գործունեության զարգացման սկզբունքային հարցը գիտամանկավարժական դպրոցների զարգացումն է: Գիտամանկավարժական դպրոցների աջակցության գործընթացն առնչվում է՝

- տարբեր աստիճանակարգերում գտնվող բարձրորակ գիտաշխատողների կայացմանը,
- գիտահետազոտական գործունեության հակվածություն ունեցող, օժտված ուսանողների բացայտմանը և աջակցմանը,
- գիտահետազոտական աշխատանքներում տաղանդավոր ուսանողների, հատկապես մագիստրոսների, ներգրավմանը, (նաև ֆինանսական հիմունքներով),
- ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում ուսուցմանը,
- երիտասարդ գիտնականների գիտակազմակերպական հմտությունների ձևավորմանը և զարգացմանը:

Ուսանողների գիտահետազոտական աշխատանքն ուսումնադաստիարակչական գործընթացի հիմնական բաղկացուցիչն է, որն իրականացվում է ֆակուլտետներում, ամբիոններում, հետազոտական կենտրոնում՝ անհատական և ավարտական աշխատանքներ գրելիս, նախադիպլոմային փորձառություն անցնելիս, պետական պատվերի, քաղաքացիաիրավական պայմանագրերի, դրամաշնորհների շրջանակներում հետազոտություններին մասնակցելիս:

Նույն ժամանակահատվածում 450 ուսանող ներգրավվել է գիտական աշխատանքում՝ մասնակցելով համալսարանական, հանրապետական և միջազգային գիտաժողովների, սեմինարների, մրցույթների, ներկայացնելով 170-ից ավելի զեկուցում: Ի դեպ՝ ուսանողական դիտարկումներն աչքի են ընկել գիտական հրատապությամբ, ստեղծագործական, որոնողական բնույթով, կատարված են եղել հետազոտական բարձր մակարդակով: Գիտահետազոտական գործունեության հակված, օժտված ուսանողների բացահայտումն ավելի դյուրին է ուսանողական գիտաժողովներում, գիտական սեմինարներում:

2013 թ. Ծաղկաձորում տեղի է ունեցել երկու ուսանողական գիտաժողով.

- 2013 թ. ապրիլի 26-28-ին ՀՊՏՀ ուսանողական խորհրդի և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի նախաձեռնությամբ կազմակերպված «ՀՀ տնտեսության զարգացման մարտահրավերներն ու խոչընդոտները» խորագրով ուսանողական գիտաժողովը,

- 2013 թ. մայիսի 31-ից հունիսի 2-ի ՌԻԳԸ «ՀՀ տնտեսության զարգացման հիմնախնդիրները» խորագրով գիտաժողովը:

«ՀՀ տնտեսության զարգացման մարտահրավերներն ու խոչընդոտները» գիտաժողովին մասնակցել և ելույթներ են ունեցել ՀՀ ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը, ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանը, ՀՊՏՀ ուսանողական խորհրդի նախագահ Սևակ Խաչատրյանը:

2013 թվականի մայիսի 31-ից մինչև հունիսի 2-ը Ծաղկաձորում տեղի է ունեցել «ՀՀ տնտեսության զարգացման հիմնախնդիրները» խորագրով ՌԻԳԸ 35-րդ համահամալսարանական գիտաժողովը, որին մասնակցել և գիտական ուսումնասիրություններ են ներկայացրել համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողները:

Գիտաժողովի երեք օրերի ընթացքում լսվել է 31 զեկուցում՝ «ՀՀ ֆինանսական շուկայի զարգացման միտումները», «ՀՀ տնտեսության մակրոտնտեսական կարգավորման հիմնախնդիրները» և «Ձեռնարկատիրության զարգացման և մրցունակության հիմնախնդիրները ՀՀ-ում» խորագրերով:

Համալսարանում շարունակվում են ուսանողներին գիտական աշխատանքում ներգրավելու ուղղությամբ կատարվող քայլերը: 2013 թվականն առանձնանում է նաև նրանով, որ առաջին անգամ թեկուզ և փոքրաթիվ ուսանողներ մասնակցեցին ներհամալսարանական դրամաշնորհային և «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտություններին: Դա մի քայլ էր, որը դեռ շարունակություն կունենա՝ ընդգրկելով կրթական բոլոր մակարդակներում սովորողներին:

Մակրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ Ծովինար Կարապետյանի ղեկավարությամբ գիտամանկավարժական յուրօրինակ դպրոցի հիմք է դրվել: Նրա նախաձեռնությամբ ուսանողները պատրաստել են զեկուցումներ, կազմակերպել սեմինարներ, ստացել ներհամալսարանական դրամաշնորհ և հրատարակել «Նորամուծական գործունեություն» բառարանը:

Ինչպես վերոնշյալը, այնպես էլ մյուս ամբիոններում սկիզբ առնող նախաձեռնությունները, ուսանողներին հետազոտություններում ներգրավման, փոքրաթիվ, սակայն հաջողված ու հեռանկար ունեցող օրինակներ են, որոնք հիմք են այդ գործընթացի ակտիվացման նոր ձևաչափերի մշակման ու կիրառման համար:

Այսպիսով՝ թեպետ բոլոր ֆակուլտետներում գիտահետազոտական աշխատանքներում նկատվում է ուսանողների որոշ ակտիվություն, այդուհանդերձ, ուսանողական գիտահետազոտական գործունեությունը դեռևս չի կարելի համարել բավարար, ինչի մասին վկայում են մասնավորապես՝ ՈԻԳԸ նստաշրջանի մասնակիցների թիվը, ներբուհական գիտական դրամաշնորհների մրցույթին ոչ մի հայտ չներկայացնելը:

Այսպիսով՝ համալսարանի գիտության բնագավառի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման ուղղությամբ 2013 թ. կատարված աշխատանքը հիմք է եզրակացնելու, որ ստեղծվել են անհրաժեշտ պայմաններ՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2012-2017 թթ. գիտահետազոտական և նորաստեղծական գործունեության զարգացման հայեցակարգով հաստատված (ՀՊՏՀ գիտական խորհրդի 2011 թ. նոյեմբերի 30-ի որոշմամբ, արձանագրություն N 3) և սահմանված որոշակի նպատակների հասնելու և խնդիրները լուծելու համար:

Միաժամանակ, հարկ է նշել, որ այդ բնագավառում առկա են որոշ հիմնախնդիրներ, որոնք հրատապ լուծում են պահանջում:

Գիտական գործունեության միջազգայնացումը

Համալսարանի գիտական գործունեության միջազգայնացման առումով կարևորվել է հետևյալը.

- մասնակցությունը միջազգային գիտաժողովներին,
- միջազգային հրապարակումները,
- հետազոտություններն արտասահմանյան համալսարաններում:

Համալսարանի աշխատակիցները 2013 թվականին մասնակցել են Գերմանիայում, Մալայզիայում, Թաիլանդում, Հունգարիայում, Չինաստանում, Ռուսաստանի Դաշնությունում, Ուկրաինայում, Վրաստանում անցկացված գիտաժողովներին:

Համալսարանի առանձին աշխատակիցներ տևական գիտական հետազոտությունների և սեմինարների են մասնակցել Գերմանիայում, Չինաստանում, ԱՄՆ-ում:

Համալսարանի ռեկտոր Կորյուն Աթոյանը 2013 թ. ապրիլի 10-11-ին Սանկտ Պետերբուրգում մասնակցել է ՌԴ Պետդումայի նախաձեռնությամբ կազմակերպված «Եվրասիական տնտեսական հեռանկար» միջազգային համաժողովին:

Գիտության բաժնի պետ Խորեն Մխիթարյանը մայիսի 7-ից 29-ը Պեկինում մասնակցել է գիտական հետազոտությունների միջազգայնացմանը և կրթական բարեփոխումների հիմնախնդիր-ներին նվիրված միջազգային սեմինար-խորհրդակցությանը:

ՀՊՏՀ տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկան Ատոմ Մարգարյանը Գերմանիայի «Արտաքին ակադեմիական փոխանակման ծառայություն (DAAD)» ծրագրի շրջանակում հուլիս, օգոստոս ամիսներին մասնակցել է Գերմանիայի Յենայի Ֆրիդրիխ Շիլլերի անվան համալսարանի և Մաքս Պլանկի հետազոտական ինստիտուտների համակարգում գործող Յենայի տնտեսագիտության ինստիտուտի համատեղ հետազոտական «Բնովացիոն փոփոխությունների տնտեսագիտություն» ծրագրին:

Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության (DAAD)՝ գիտնականների և բուհերի դասախոսների համար գիտական ծրագրի շրջանակում ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու Կարեն Գրիգորյանը երկամսյա (հուլիս-օգոստոս) գիտահետազոտական աշխատանք է իրականացրել Գերմանիայի Տրիերի համալսարանի միջազգային տնտեսական քաղաքականության ամբիոնում: Նրա գիտական նախագծի թեման է՝ «Եվրոպական Միության կառավարման մարմինների և ԵՄ անդամ երկրների արդյունաբերական քաղաքականության ուսումնասիրությունը»:


2014 թ. հունվարից, Շվեյցարիայի համազործակցության և զարգացման գործակալության հետ, կմեկնարկի «Դեպի Հայաստանի ներառական տնտեսություն» հետազոտական ծրագիրը:

Միջազգային գիտաժողովներին են մասնակցել նաև համալսարանի ուսանողներ և ասպիրանտներ:

Բարձրագույն կրթության երրորդ աստիճան (ասպիրանտուրա)

Համալսարանի հաջողությունները պայմանավորված են լինելու երիտասարդ հետազոտողներով գիտության մարդկային ներուժի զարգացմամբ, ինչին կոչված է բարձրագույն կրթության երրորդ աստիճանը՝ ասպիրանտուրան և դոկտորանտուրան, ինչպես նաև գիտական կոչումների համակարգը:

2013 թ. դրությամբ համալսարանի ասպիրանտուրայում սովորում են առկա ուսուցմամբ 29 (որից 2-ը՝ արտերկրից), հեռակա ուսուցմամբ՝ 76 ասպիրանտ:



Գծապատկեր 2.4. ՀՊՏՀ ասպիրանտների և հայցորդների թիվը

Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել առկա ուսուցման համակարգում 11, հեռակա ուսուցման համակարգում՝ 21 դիմորդ: 2013 թվականին առկա ուսուցմամբ ասպիրանտուրայի 9 շրջանավարտից 8-ը պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն: Հեռակա անվճար ուսուցման համակարգում սովորող ասպիրանտներից 12-ն ավարտել են (1-ը ազատվել է), 2-ը պաշտպանել են ատենախոսություն:

Ասպիրանտուրայի արդյունավետությունը, ըստ ուսուցման համակարգերի՝ առկա, հեռակա, համապատասխանաբար կազմել են 88,9% (նախորդ տարվա 33,3%-ի փոխարեն), 16,7%՝ նախորդ տարվա 0%-ի համեմատությամբ:

Ամբիոնները ժամանակին պատրաստել և հաստատման են ներկայացրել առարկայական ծրագրերը:

Համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի 014 մասնագիտական խորհրդում 2013 թվականին կազմակերպվել է 52 ատենախոսության հրապարակային պաշտպանություն (այդ թվում՝ 1 դոկտորական ատենախոսություն):

Հաշվետու տարում ՀՀ ԲՈՀ-ը հաստատել է դոցենտի գիտական կոչում շնորհելու 9 որոշում: ՀՀ ԲՈՀ-ի կողմից ատենախոսության գիտական ղեկավար նշանակելու թույլտվություն են ստացել 7 տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:

2013 թ. ՀՊՏՀ գիտական գործունեությունն, ընդհանուր առմամբ, կարելի է բնութագրել արգասաբեր, նորաստեղծություններով լի: Նոր նախաձեռնությունները տվեցին առաջին արդյունքները, որոնցից կարևորը հետազոտություններում ներգրավված պրոֆեսորադասախոսական կազմի ոգևորությունն էր, ձևավորված գիտական նոր միջավայրը: Մտացված գիտական արդյունքները կքննարկվեն արդեն 2014 թ. առաջին ամիսներին, երբ կհրատարակվեն նախահրատարակչական փուլում գտնվող բոլոր նյութերը: Միաժամանակ, ձեռքբերումները նոր հենք կհանդիսանան հետագա հետազոտությունների համար, կբարձրացվի դասախոսների և հատկապես ուսանողների ու ասպիրանտների ներգրավվածության մակարդակը:

Հիմնախնդիրները

Թեպետ հաշվետու տարում գիտահետազոտական գործու-նեության բնագավառում արձանագրված ձեռքբերումներին, դեռևս առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնցից են.

- երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման գործընթացներին համալսարանի ներուժի ոչ համարժեք մասնակցությունը,
- տնտեսության մասնավոր հատվածի հետ համագործակցության և գիտական հետազոտությունների արդյունքների առևտրայնացման բացակայությունը,
- ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի՝ երիտասարդ հետազոտողներով համալրման ոչ բարձր մակարդակը,
- ֆինանսական հիմունքներով հետազոտություններում ասպի-րանտների և ուսանողների ոչ բավարար ներգրավումը,
- տնտեսագիտական մտքի նվաճումների հիման վրա ստեղծված մենագրությունների, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների սակավաթիվ լինելը,
- արտասահմանյան առաջատար պարբերականներում գիտական հրապարակումների փոքր թիվ կազմելը,
- ըստ ամբիոնների՝ գիտական հրապարակումների անհամաչափ բաշխվածությունը,
- գիտաժողովներին, գիտական սեմինարներին և այլ քննարկումներին ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի համաչափ մասնակցությունը,
- հետազոտությունների ֆինանսավորման աղբյուրների բազմազանեցված չլինելը:

2013 թ. գիտական գործունեության զարգացման ուղղված նախաձեռնությունները պետք է խթան հանդիսանան առկա հիմնախնդիրների հաղթահարման համար:

Հրատարակչական գործունեություն

2013 թվականին համալսարանի «Տնտեսագետ» հրատարակչությունը շարունակել է իրականացնել իր առաքելությունը՝ հրատարակության նախապատրաստելով գիտաժողովների և ուսումնամեթոդական նյութերը:

Հաշվետու տարում լույս է տեսել 4 ժողովածու «Տնտեսագետ» հրատարակչության գրիֆով և միջազգային ինդեքսավորմամբ: Հաշվետու տարում հրատարակվել են նաև 3 ուսումնական ձեռնարկ, 1 մենագրություն, 1 դասախոսության տեքստ, 2 գիրք:

2013 թ. գունավոր տպագրական սարքավորման ձեռքբերմամբ մեծացել է հրատարակչության արտադրական կարողությունը, ինչը դուրսին կդարձնի և կարագացնի ու տնտեսապես ավելի արդյունավետ կդարձնի ուսումնամեթոդական և գիտական նյութերի տպագրությունը:

«Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի» հանդեսը տպագրվել է եռամսյա պարբերականությամբ՝ ընդգրկելով ավելի մեծ թվով հեղինակների ոչ միայն հանրապետության սահմաններից, այլև արտերկրից (Ռուսաստան, Ուկրաինա, Չեխիա, Հունաստան և այլն):

